

39. ՀԵՔԻԱԹ ԹԵԲՈՒՐԻ ԵՎ ՔՑՈՒՉՈՒԿ ԾԱՉԱՑԻՐԻ

Կէղնի, չէղնի թագավորըմ կէղնի։ Էդ թագավորի աչքերը կբրոնըվի, կասե. —Ի՞նչ տեխ օր իմ ձիու օտք չառեր է, էն տեխեն էրթան հող բերին, իմ աչքեր կաղնա։

Էդ թագավորին մեկ տղա կեր. օր լսեց, հ'էլավ գնաց պապու մոտն, ասեց.—Աբո՛, զքու աչքերու դեղն ասե ընծիկ, ես կէրթամ բերիմ։

Հերն մեկ լէ թաքրնեց.—Լաո՛, էն տեխ օր իմ ձիու օտք չառեր է, էրթաս հող բերես, թալիմ իմ աչքեր, կաղնամ։

Տղեն հ'էլավ էկավ հալվորում՝ մոտ, ասեց.—Աբո՛, դու աշխարհ իս տեսի ու հ'ընցուցի, իմ պապու աչքեր բոնվեր ին,—կասե,—որն օր էրթա իմ ձիու չկոխած տեխեն վերցու հող բերե, թալիմ իմ աչքեր՝ կաղնա։

Հալվորն ասեց.—Լաո՛, օր էկեր իս հ'իսնե կհարցուս, ես լէ զիմ աղեկութեն կէնիմ, կբերիս, չըս բերի, էն լէ քու բան է։ Քու պապու ձին հանդե կապուկ իմ մոտ, էկո կիտամ քզիկ, հեծի ու գնա։

Տղին ասեց.—Դը՛հ գնա, պղինձըմ ջուր տաքցու, առ էկո, զձին քաշե դուրս, լվա, բի քիչըմ չէ գարի տուր։

Տղեն գնաց պղինձըմ քըլքըլման ջուր առավ էկավ, զձին աղեկըմ լողկցուց, բերեց կոտըմ լէ գարի լըցեց հ՚առաջ։

Հալվորն ասեց.—Գնա՛, թամք հ՚առքեն կախուկ է, վերու բի, զարկ վրեն, թաժա թամք չուզե, զուր հին թամք զարկ վրեն։

Տղեն անկաճ չէրեց հալվորուն, գնաց թաժա թամքըմ առավ էկավ, զարկեց ձիու վրեն. օր քաշեց զձին՝ գռնեն կէլներ դուրս, ձին վերցուց զթամք զարկեց հ՚առիք, էղավ հազար կտոր։ Օր ձին զթամք չնչխեց, տղեն դառցավ էկավ հալվորու մոտ կանավ ու զմադեն էրեց։

Հալվորն օր տեսավ տղեն զմադեն էրեր էր, հասկցավ, ասեց.

— Ի՞նչ կա։

Տղեն ասեց.—Գացի թաժա թամքըմ բերի զարկի վըր ձիուն, օր կքաշենք դուրս, զարկեց դրրընդիք, էրեց հազար կտոր։

Հալվորն ասեց.—Օղորդ օր ասեր ին՝ հում կաթ ուտողին իթիպար չկա, չէ՞ ես քզիկ ասի, ուր թամք կախուկ է ֆըլան տեխ, գնա, ա՛ռ, էկո զարկ վրեն, հ՚որի՞ անկաճ չէրիր։

Ջանդարդի էղավ, հ՚էլավ ինք հ՚ընկավ տղի հ՚առջև, գնաց, զթամք հ՚իջուց, բերեց ուր ձեռքով զարկեց վըր ձիուն։

Ասեց.—Բումբաբա՛ք, կուզի՞ս օր տղեն հեծնա ղքզիկ։

Զին գլխով էրեց, թե՝ հա՛։

Տղեն քաշեց զձին դուրս, հեծավ, բարեմնաց էղավ հալվորուց ու ընկավ ճամբախ, գնաց։

Շատ գնաց, թե քիչ, ձին հ՚էլավ լեզու։ Ասեց.—Տղա՛, ի՞նչ իս հեծի վըր միջաց ու անգետ-անգետ կչարչարիս զիս, հ՚ո՞ւր կէոթաս, ի՞նչ գինամ։

Տղեն ասեց.—Ես կէրթամ էնտեխ օր իմ հոր ձիու օտք չառեր է, կէրթամ քիչըմ հող բերիմ, թալիմ իմ պապու աչքեր, քոռցեր է, բալքիմ սաղնա։

Զին ասեց.—Տնաշե՛ն, հմալ ասե։ Օր հըմալ է, կէրթանք հէնա քաղաք, կիջնիս իմ վրավեն, իրեք օր կիշքիս։

Քշեց քիչըմ տեխ տղեն զուր ձին, տեսավ օր թեբուրըմ կեր հ՚ընկուկ վըր ճամբուն։

Տղեն զթեբուրն օր տեսավ, խելք գլխեն գնաց։ Տղեն ասեց.—Զէգա թեբուր վերո՞ւմ, չվերո՞ւմ։

Զին ասեց.—Վերուս լէ փոշման իս, չվերուս լէ փոշման իս։

Տղեն ասեց.—Օր վերում լէ փոշման իմ, կվերում։

Վերուց, առավ հետ էկավ։

Ասեց.—Կտանիմ իտամ էդա քաղքի թագավորին, բալքիմ ընծիկ պաշտոնըմ իտա, ապրիմ։

Առավ էկավ քաղաք, հարցուց.—Թագավորի տուն ո՞ր մեկն է։

Ծուցուցին, առավ ղթեբուր, տարավ տվեց թագավորին։

Թագավոր լէ գեղըմ տվեց էդ տղին, ասեց.—Գնա՛ քանի սաղ իս, նստի, կեր, խմե ու քեֆ էրե։

Տղեն է, օր էկավ մտավ էդ գեղի մեշ, սրթար չթողեց, գեղացիք հ'ըմեն դատ ու մատաթ են ուր ձեռքեն, հրմալ անիծուկ մեկմ'էր։ Ջանդարդի էղան գեղացիք, ռեսով-գեղակնով, հ'էլան էկան սադրազամի մոտ, ասին.—Աստծո՛ւ սիրու խաթրի համար էղնի, մենք էդա տղի ձեռք չընք կըռնա քաշի, զմեր գեղ վառեց, զէդի հանե մըր դեղի միշեն։

Սադրազամն հ'էլավ էկավ թագավորի մոտ, ասեց.—Թագավոր ապրած, դու թեբուրն իս տեսի, որ ղթեբրի տեր տեսնա՞ս, ի՞նչ կասիս։

Ասեց թագավոր.—Էդ թեբրի տեր դո՞ր է, ո՞ր կբերե։

Սադրազամն ասեց.—Ես ի՞նչ գինամ դոր է, որն օր բերեր է ղթեբուր, էնի գինա թեբրի տեր դո՞ր է ու կըռնա բերե։

Թագավոր զէդ օր լսեց, հ'էլավ շուհաբ էրեց տղին, առավ, էկավ։ Էկավ նստավ ձիու մոտ ու քոռ փոշման կիլեր։

Ձին տեսավ օր տղեն կիլա, ասեց.—Հ'ո՞րի կիլաս։

Ասաց.—Ձիլամ ի՞նչ էնիմ, թագավոր դրեր է վըր ընծիկ՝ ղթեբրի տեր կուղե։

— Լաո՛, ես հ'առջին հեղ չասի՞ քզիկ մ'վերցու, վերցուա լէ փոշման իս, չվերցուս լէ փոշման իս, հ'որի՞ վերցիր,—ասեց,—հ'էլի՛ գնա թագավորից օր առ, մեկէլ շաբթուն կէլնիք էրթանք։

Էն շաբաթ հ'ընցուցին, էկան էն էրկուշաբթին օր կէրթեն, ձին ասեց տղին.—Տղա՛, գնա անծեղըմ սպանե, առ քու մոտ, էկո էրթանք։

Տղեն գնաց անծեղըմ սպանեց, առավ հետն ու էկավ, էկավ զձին հեծավ ու հ'ընկան ճամբախ։ Օր հ'ընկան ճամբախ կէրթեն, ձին ասեց.—Տղա՛, հ'ո՞ւր կէրթաս։

Տղեն ասեց.—Տնաշե՛ն, ես ի՞նչ գինամ դո՞ր կէրթամ։

Ձին ասեց.—Կէրթանք էդա դարի վրեն, ես կէրթամ էնդին կարծիմ, դու լէ փորե զգետին, էրե խանդակ ու մտի մեջ, վրեդ քիչըմ խոտ պետք է քաղիս թալիս օր մարդ չտեսնա զքզիկ։

Տղեն ասեց.—Շա՛տ աղեկ։

Զին մեկ լէ դարձավ ասեց.—Տղա՛, հանդէ մենք կէրթանք էնտեխ, հ՚ընցած շաբթուն հավքերու վազիրն ու սադրազամ տուդին ու խումրին էր, էդա շաբթուն անծեղն ու ագռավն ին էղի։ Կէրթանք հանդէ էնտեխ, ղու օր կմտնիս խանդրկի մեջ, անծըղու հ՚ո... բանցըրցու, զգլուխ ցասցու, հանդէ էնի կհերսոդի, կիշնի օր զարկե, դու զանծեղ կթողիս քու ձեռքեն, կթալիս ղէնի բռնես։

Տղեն գնաց Ֆիու ասածի պես էրեց, փորեց հորրմ, մտավ մեջ, քիշըմ խոտ թալեց, աղեկըմ ծածկեց, մինակ ծակըմ թողեց, զանծըղու հ՚ո.. հանեց դուրս, զգլուխ թողեց ներս։ Հավքեր էկան կընցնեն, թերուրքի տեր տեսավ օր անծեղըմ զինք բանի տեխ չղնե, զգլուխ խոթեր է մըշ խոտերուն ու զպոշ* ցցի դուրս։

Ասեց ուր վեզիրին ու սադրազամին, անծըղուն ու ադռըվուն. —Էդա անծեղ հ՚ո՞րին է ջոկվի մինե։

Ագռավն ասեց.—Ջըմ գինա։ —Ջարկա սպանե, հ՚եր էնի զմզիկ բանի տեխ չղնե ու կչոկվի մինե։

Ասելն ու զարկել մեկ էղավ, տղեն թալեց զուր ձեռք, բռնեց։ Հ՚էլավ հեծավ զուր ձին, առավ էկավ տվեց թագավորին։ Օր բերեց տվեց թագավորին, թագավոր թե մեկ կիշքեր տղի վրեն, էղավ էրկուք։ Ասեց.—Գնա՛, էդա չոլի մեջ ինչքան գեղ կա՝ քղիկ, կեր ու խմե, քեֆ էրե։

Տղեն էկավ զէն գեղ թողեց, ուրիշ գեղըմ նստավ, հըմալ էրեց զէդ գեղ օր ծուխ լէ կտրեց, շատ անառակ էր։

Գեղացիք ջանդարդի էղան, ասին.—Ջանը՛մ, էդի էն մարդն է օր զֆըլան գեղ հ՚ընցուց, գեղացիք ջանդարդի էղան, հ՚էլան գացին սադրազամի խեչ գանգատ, սադրազամ վերուց էն տեխեն, թալեց մըր գեղ։ Հ՚էլնինք էրթանք սադրազամի մոտ, հէրք է մենք ինչ օր քաշինք, թըղ վերցու մըր գեղեն, թալե ուրիշ գեղըմ։

Հ՚էլան, դիմավորեցան, գացին մըտ սադրազամ, զուրանց դարդ լացին ու ասին.—Ցամա՛ն, զմզիկ ազատե էդա անաստված մարդու մոտեն։

Սադրազամ հ՚էլավ գնաց թագավորի մոտ, ասեց.—Թագավո՛ր ապրած, դու զհավորիկ տեսե՞ր իս, օր խոշաման խազեմ տվիր մեկ ըռութ տղիմ՝ ավրել, ըպա օր զհավորիկի տեր տեսնաս, իմա՞ լ կէղնիս։

— Իմա՞լ,—ասեց թագավոր,—հավորիկի տեր լէ կա՞։

---

* Բնագրում՝ զգլուխ (Ս. Կ.)։

Սադրազամն ասեց.—Հավորիկն առանց տիրուն կէղնի՞։

Թաղավորն ասեց.—Չէնի ո՞ր կբերե։

— Որ կրերե, որ չբերե, մեկ լէ տղեն կրռնա բերե։

Հ'էլավ կանչեց զտղեն, առավ էկավ, դրեց վրեն.—Ահա՜ն, զէդ հավորկի տեր քինե կուղիմ, բերիս՝ րի, չբերիս՝ զքու գլուխ կկտրիմ։

Տղեն մեկ լէ սևսրտավ, էկավ նստավ ձիու մսուր ու լաց։

Ձին տեսավ օր տղեն կիլեր, ասեց.—Տղա՛, հ'որի՞ կիլաս։

Ասեց.—Կիլամ որ թագավոր դրեր է վրը ընծիկ՝ զէդ հավքու տեր կուղե։

Ձին ասեց.—Տղա՛, մի լա, ա՜խ, քու էրած բան շատ է, ախըր օր էրեր իս, հ'էլի գնա թագավորի մոտ, ասե. «Ես քինե կուզիմ գութնիմ ղընճիլ շինիս, մեկ օղն օսկի, մեկն՝ արծաթ։ Էն խավլով օր սադրազամի քսեն էղնի, թը չէ՝ սեր կպըթլի, ես չըմ կռնա էրթա բերի զէդ հավքի տեր»։

Տղեն հ'էլավ դեմ քշեց թագավորի մոտ։ Ձիու թարիֆ էրածի պես ասեց.—Թագավո՜ր, ես կէրթամ զէդ հավքի տեր կբերիմ էն խավլով օր ղընճիլըմ շինիս իտաս, առնիմ հետս էրթամ, մեկ օղն օսկի էղնի, մեկ լէ՝ արծաթ, բըլե սադրազամի քսեն պետք է էղնի մասրաֆըն, թը չէ՝ սեր կպըթլի։

Թագավորն է՝ դրեց վրը սադրազամին։ Սադրազամ հ'էլավ զուր ունեցած-չունեցած ծախեց, անճախ տվեց ղընճիլըմ շինել, առավ էկավ տվեց տղեն։ Տղեն առավ ղընճիլն էկավ ձիու մոտ, հ'էլավ հեծավ զձին, ղընճիլ է բառցավ վրը ջորեսներուն, տվեց հ'առեջ ու հ'ընկավ ճամբախ։ Օր քիչըմ տեխ գացին, ձին ասեց տղին.—Կէրթանք հանդե էնատեխ, զընճըլի գլուխ աղեկըմ կբերիս, հալխադոր կէնիս, կէձգիս իմ թամք, մեկ գլուխ լէ կբռնիս, կէրթաս, հանտե էնատեխ մըղարա կա, կիջնիս մղարի մեջ։

Տղեն ձիու ասածի պես, բերեց աղեկըմ մուխքըմցուց ղընճըլի մեկ գլուխ վրը ձիու պառեկին, բռնեց զմեկէլ գլուխն, հ'իջավ էդ մուղարի ծրկու մեջ։

Ձին ասեց.—Հանդե կիջնիս էնտեխ, ախչիկըմ կիգա, կասե. «Հողածի՛ն, զիմ հավորիք չը՞ս տեսեր ի»։ Դու ասե. «Տեսեր իմ»։ Հանդե օր ասես՝ տեսեր իմ, կիգա, կմոտենա քզիկ, խաբե, աղեկըմ գրկի հ'ինք ու ղընճիլն խըլվըլցու, ես կքաշիմ զձզիկ հանիմ։

Ձիու ասածի պես օր հ'իջավ տղեն էդ ծրկու մեջ, տեսավ ախչիկըմ՝ ուտիս-չուտիս, հըմա հ'ինքվեր իջքիս, էնդիեն էկավ ու ա-

սեց.—Հողածի՛ն, դլխուդ ու արևուդ մեռնեմ, զիմ հավորիկ չը՞ս տեսեր ի։

Տղեն ասեց.—Տեսե՛ր իմ, էկո դիտավի, սալըխիմ։

Օր ախչիկ մոտեցավ, տղեն քիվըմ զընճըլի ակռվուկն խայիմ-ցուց ուր մեջքն ու ախչըկան, շըխշըխցուց, որ շըխշըխցուց, ձին հասկցավ օր տղեն զախչիկն է խըֆլի, քաշեց, հանեց դուրս։

Հ՝էլավ տղեն, հեծավ զուր ձին, զախչիկ լէ դրեց վըր ջորուն, քշեց էկավ։ Էկավ օր հասավ քաղքին, շուհապ գնաց թագավորին, թե տղեն զհավքու տերն առավ էկավ, խորոտիկ ախչիկըմ է։

Ե՞ր ճամբու հետ կիգեն, ախչկա սիրտ էրկմտավ, հարցուց.—Տղա՛, զիս քզի՞կ է կտանիս, չէ՞ ուրիշ մարդու։

Տղեն ասեց.—Դամով ուրիշին է կտանիմ, տեսնանք վերջ-իմա՞լ կէղնի։

Առավ էկավ, զախչիկն, տվեց թագավորին։

Ախչիկն օր էկավ, դրեց վըր թագավորին, ասեց.—Ջուրի իմ համամի թախում չճամբիս բերես, ես քու հետ չըմ պսակվի։

Թագավորն ասեց.—Ջքու համամ ո՞ր կռնա էրթա բերե։

Ախչիկն ասեց.—Ո՞րն օր զիս բերեր է, զիմ համամ լէ էնի կբերե։

Թագավոր ճամբեց զտղեն առավ էկավ, ասեց.—Հա՛ իգա, հա՛ էրթա, կէրթաս զէդ ախչկա համամթախըմին կառնես կիգաս։

Տղեն ֆարազի ասեց՝ չը՛մ կըռնա, թագավորի հո՞ղն է։

Սևավորավ, ղձեռք դրեց ծոցք ու հ՝էլավ գնաց ձիու մսուր նստավ։ Ձին տեսավ օր մեկ լէ տղեն թիզըմ զքիթ ու մռութ կախեր է, հասկցավ բանըմ կա։ Ասեց.—Ի՞նչ է էղի, տղա, էմ լէ զքիթ ու մռութդ կախեր ես։

— Ի՞նչ էղնի, թագավոր դրեր է վըր ընծիկ, զախչկա համամ-թախըմին կուզե։

Ձին ասեց.—Կէլնիս կէրթաս թագավորի մոտ, թագավորից կուզիս քառսուն ձի, քառսուն խիդր անլվա բուրդ, քառսուն տիկ լէ գինի, էն խավլով օր էդոնք սադրազամի քսեն էղնին, չէղնի՞ խաբուլ չէ, սեր բաթալ կէղնի։ Բերել իմ վրեն։

Տղեն հ՝էլավ գնաց թագավորին ասեց.—Էն խավլով, օր սադ-րազամ ինք ուր փարով առնե, թըլիսմ բաթալ չէզնի, ընծիկ կիտաս քառսուն ձի, քառսուն խիդր անլվա բուրդ, քառսուն տիկ գինի, էր-թամ առնիմ հ՝իգամ։

Թագավորն է՝ հրաման էրեց, սադրազամ գնաց թադարուկ տեսավ, առավ էկավ, բերեց տվեց տդին։ Տղեն լէ առավ էկավ ձիու մոտ։ Հ՝էլավ հեծավ զուր ձին, տվեց զէդոնք հ՝առեջ ու քշեց։ Գնաց ծովում՝ պռուկ սարըմ կեր, հ՝էլավ դուրս, էդտեղ հ՝աղբուրըմ կեր, աղեն վըր հ՝ադբրին հ՝իջավ։

Ձին ասեց.—Տղա՛, էդս։ զըմեն գրոներ կցամքըցուս, զբուրդ լէ կղարկիս հ՝աղբրի դեմ, օր կաթ ջուր չիգա գրոան մեջ։ Էդա տկերու դինին լէ կդարդրկիս դրոներու մեջ։ Մենք լէ կէրթանք էնատեղ կարծինք, դու լէ քղիկ խանղակըմ կշինես, մեջ կպատրվտիս։ Էնդոնք էրկու քուռակ ին՝ մեկն բաշ է, մեկէլ՝ կարմիր, կէլնեն ծովու միջեն կիգան։ Օր էկան տեսան զմզիկ, կզարկենք հ՝իրարու, հանդե էնդոնք կդադրին, կիգան վըր ջրին, օր ջուր խմին, ջուր չկա՝ կխմին կսարխոջնան, դու հ՝էլի զէն բաշ քուռակ գրկվի ու կանի, հանդե ես կհասնեմ։

Ձիու ասածի պես տղեն զբուրդ զարկեց հ՝աղբրի ակ, աղեկըմ դդոներ չորցուց, բերեց զքառասուն տիկ գինին լցեց գրոներու մեջ, ձիանք թողեց կարծեն, ինք լէ ջինեց ուրին հողու տակ դոմբկըմ, մտավ մեջ։ Մեկ լէ տեսավ ծովու միջեն էրկու հրեղեն ձի, մեկն բաշ, մեկն կարմիր, հ՝էլան էկան։ Օր հ՝էլան էկան, զէդ ձիանք տեսան, թափան վըր հ՝իրարու, զարկին զիրար, հրեղեն ձիեր հրվթրրան, էկան օր ջուր խմեն, ջուր չկեր, դաթի գինի էր գրոներու մեջ, խմեցին, սարխոջցան։ Տղեն քիփըմ հ՝էլավ զբաշ քուռակն խրվլեց, մեկէլ փախավ, պատավ ծովու մեջ։ Ձինն հասավ բաշ քուռկուն ասեց.—Քուրո՛ջ տղա, ի՞նչ կտոր-կտոր կէղնիս, կխրրխընջաս, դը՛հ կանի հողածնի մոտ, զքզիկ աղեկըմ կպահե։

Էդ հրմալ օր ասեց, ձին էլ չխրլվրլաց, ինչ օր բրզմար զարկեն ուր բերան, քիփըմ կանավ։ Օր կանավ, ասեց ձին տղին.—Հեծի՛ զիմ քուրոջ տղեն, գնա՛ ծովու հ՝որթալախ, հանդե էնտեղ քարըմ կա, համամ թախրմին խոխմ՝ է, դրուկ է քարու տակ, կվերուս, քիչըմ լէ հոդ կառնես, քու պապու աչքերու համար, իմ օտք հ՝ոնի չգացեր է, կիգաս էրթանք, ես ըխդիարցեր իմ, չըմ կրոնա հ՝իգա, կկանեմ հ՝ոդա, հար հ՝իգաք։

Տղեն հեծավ զքուռակ ու ծովու հ՝որթոլախ հ՝իջավ, տեսավ օր կղզիմ՝ կա էդ տեղ ու քարըմ։ Զքար շրջեց, տեսավ խոխըմ կա էդ տեղ, վերցուց, քիչըմ հող լէ հանգուրցեց ուր տասմըլի ծերն ու հեծավ զուր ձին, զաչք խփուց-չխփուց՝ մեկ լէ ծովու էդա դին

դրեց։ Էկավ ուր հ՚առջի ձիու մոտ, առավ զմեկէլ քառսուն ձին լէ հետ, քշեց էկավ։

Ճուհար գնաց թագավորին, թե.—Ջասի՞ս, տղեն առավ զհամամ թախրմին, էկավ։

Բերեց տարավ տվեց թագավորին, թագավոր լէ ախչկան տվեց. օր տվեց ախչկան, զարկեց դետին, էղավ օղորթմա համամ, տկլոզցավ ու մտավ մեջ, ասեց.—Թագավորին ասեք, ինք լէ թըղ հ՚իգա մտնի մըջ լողկընանք էլնինք, առնինք զիրար։

Գացին ասին թագավորին թե.—Ախչիկ զքզիկ կկանչե։

Թագավոր հ՚էլավ էկավ, տեսավ օր ախչիկ բացեր է զհամամ ու տկլոզցեր է, մտի մեջ. ինք լէ տկլոզցավ, մտավ մեջ օր հիտրաց լողկընեն, հ՚էլնեն առնեն զիրար։

Թագավոր օր տկլոզցավ, մտավ համամլըքի մեջ, ախչիկ խառնեց։ Խառնեց ու ինք թողեց հ՚էլավ դուրս։ Օր հ՚էլավ դուրս, ալաֆ վերցուց զթագավոր իրից-վ, էղավ կուտրմ, մնաց մեջ։ Թագավորն օր վառավ խըլըսավ, ախչիկ դրեց.—Հա՛ էդա հ՚իգամ, էդա էրթամ ես՝ զիմ բերող կառնիմ։

Վախեցան ուրիշներ օր տեսան զթագավոր։

Ախչիկ գնաց առավ զուր բերող։ Տղեն օր առավ զախչիկ, հ՚էլավ հեսցուց վըր ուր ձիուն, ինք լէ հեծավ զուր քուռակ, թագավորի ունեցած ու չունեցած բառցավ վըր քառսուն ձիուն, էկավ ուր հոր հ՚էրկիր հ՚էլավ դուրս։

Ճուհար տվին ուր հոր.—Ջասի՞ս, քու տղա Քուչուկ Ճաղայիրն էկավ, բերեց քու աչքերուն դեղ։

Բերեց տվեց զդեղ պապուն։ Քսեց աչքերուն։ Օր բացվավ, պապն ասեց.—Լառ՛, չէդնի՞ իմ ձիով իս գացի։

— Հա՛,—ասեց տղեն,—քու ձիով իմ գացի։

Գինամ ուրիշ ձիով էրթեր զէն տեխ՝ չգտներ։

— Իմ ձիու օտք հար էն ծովու պռուկ գացեր է, հոնկուց էգա դին տեխ չմանցեր է, օր չհասեր է, մինակ ծովու էն կղզին օր կասիս, չըր առի, էն լէ քու ձիու օտք առավ։

Բերեց թագավոր օր աչքեր բացվավ, նոր յոթն օր բռնեց զՔուչուկ Ճաղայիրի հաբսնեք։ Ջարկին ու խաղցան. էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ՚իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։